Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք.Երևան 16.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել է տարբերակ 4-ի նյութական իրավունքի բաժնի 18"35-րդ, 27"52-րդ, 28"43-րդ, 20"42-րդ, 29"47-րդ, 7"38-րդ, 3"10-րդ, 38"45-րդ հարցերը:

35-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից ներկայացված հիմնավորումները խնդրում առկա պայմանների անբավարարության պարագայում ողջամիտ են և ընդունելի հանձնաժողովի համար, հետևաբար տրվում է 1 մավոր:*

52-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները չի բխում քրեական օրենքի նորմի մեկնաբանությունից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

43-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են , տրվում է 1 միավոր:*

42-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, քանզի ծանր վնաս պատճառելը ավազարկության առանձնապես ծանրացնող հանգամանք է, իսկ քրեահրավական նորմերի մրցակցության կանոններից ելնելով ծանրացնող /զենքի գործադրմամբ/ և առանձնապես ծանրացնող հանգամանքների մրցակցության պայմաններում արարքը չէր կարող որակվել ծանրացնող հանգամանքով, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

47-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից մեջբերված դրույթները չեն բխում իդեալական համակցության որակման կանոններից, հետևաբար ներկայացված դրույթը և դրանցից բխող եզրահագումները ընդունելի չեն, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

38-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի մեկնաբանությունները ընդունելի չեն, քանզի հավակնորդի ընտրված պատասխանը սխալ է, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

10-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները կրկնում են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված դիրքորոշումները, մյուս կողմից խնդրի պայմանների ոչ հստակությունը թույլ չի տալիս գալ միանշանակ եզրահանգման, ուստի նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի , տրվում է 1 միավոր:*

45-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***4854*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն" նյութական իրավունքից ստացված 21 միավորը բարձրացնել 4 միավոր՝ արդյունքում արձանագրել 25 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ _____ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

_____ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ